

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

«-----» ----- 2021 թվական N -----Լ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ինչպես նաև «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և 2-րդ մասի «է» կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ն է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1121 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման վերնագրում «1121» թվից հետո ավելացնել «-Լ» տառը.

2) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. 2-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,

բ. 2-րդ, 9-րդ և 13-րդ կետերում «ֆինանսների» բառից հետո հանել «և էկոնոմիկայի» բառերը,

գ. 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1-2.6-րդ կետերով՝

«2.1 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման գծով պետական ծրագրերում ներգրավված գիտական կադրերի

պաշտոնային դրույքաչափի նվազագույն չափի հաշվարկի համար որպես բազային աշխատավարձ 2022 թվականի հունվարի 1-ից սահմանել 66 140 դրամ:

2.2 Յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատողների համար, հաշվարկվում է սույն կարգի Հավելվածով նախատեսված աղյուսակով (այսուհետ՝ Աղյուսակ) տվյալ տարվա համար սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով:

2.3 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի ոչ լրիվ կամ կրճատ տևողությամբ աշխատողների համար որպես պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափի հաշվարկի գործակից ընդունել Աղյուսակով տվյալ տարվա համար սահմանված գործակցի նորմավորված արժեքը՝ ըստ աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատաժամանակի:

2.4 Սույն կարգի 2.1-2.3-րդ կետերով նախատեսված կարգավորումները գործում են 2022 թվականի հունվարի 1-ից, այն գիտական կազմակերպությունների համար, որոնք գիտական կադրերի որակավորում են իրականացրել վերոնշյալ ամսաթվից առավելագույնը մեկ տարի առաջ:

2.5. 2022 թվականին կամ դրանից հետո գիտական կադրերի որակավորում իրականացրած գիտական կազմակերպությունների համար սույն կարգի 2.1-2.3-րդ կետերով նախատեսված կարգավորումները կգործեն որակավորմանը հաջորդող տարվանից՝ համապատասխան գործակիցներով:

2.6. 2025 թվականից հետո գործում է Աղյուսակի՝ 2025 թվականի համար սահմանված գործակիցը:»:

դ. որոշմամբ հաստատված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը լրացնել գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«ԱՂՅՈՒՍԱԿ
ԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ
ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ**

Պաշտոն	Գործակից			
	2022 թ.	2023 թ.	2024 թ.	2025 թ.
Գիտական պաշտոններ				
Կրտսեր գիտական աշխատող	1.81	2.27	2.72	3.18
Գիտական աշխատող	2.27	3.02	3.48	4.17
Ավագ գիտական աշխատող	3.02	3.78	4.54	5.19
Առաջատար գիտական աշխատող	3.78	5.29	6.35	6.71
Գլխավոր գիտական աշխատող	5.55	6.80	7.56	8.36
Ճարտարագիտատեխնիկական պաշտոններ				
Լաբորանտ կամ ճարտարագետ	1.55	1.66	1.81	2.09
Ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ	1.66	1.97	2.36	2.71
Գիտական ղեկավար պաշտոններ				
Գիտական խմբի ղեկավար	3.48	4.23	5.29	6.20
Գիտական ստորաբաժանման ղեկավար (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն)	5.29	6.05	6.80	7.21

»

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը բխում է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ 2021 թվականի փետրվարի 24-ին կայացած գիտության ոլորտի զարգացման հեռանկարների մասին խորհրդակցության արդյունքում ձևավորված մոտեցումների և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի պահանջներին համապատասխան ՀՀ ԱԺ-ի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի և գիտական համայնքի ներկայացուցիչների հետ համատեղ մշակված ՀՀ գիտության ոլորտի զարգացման հեռանկարների մասին տեսլականից, ինչպես նաև 2021 թվականի ապրիլի 8-ին ՀՀ կառավարության նիստի ընթացքում գիտության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումներին լրացուցիչ ֆինանսավորում հատկացնելու համատեքստում տեղի ունեցած քննարկումների արդյունքներից:

Ներկայումս գիտության ոլորտի առջև ծառայած կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը: Շարունակվում է գիտական կադրերի, առաջին հերթին՝ երիտասարդների զգալի արտահոսք գիտության ոլորտից, այդ թվում նաև՝ արտերկիր: Արդյունքում՝ գիտության ոլորտի կադրային կազմի այդպիսի փոփոխությունները հանգեցնում են գիտության արագ «ծերացման» (առկա է գիտական և գիտատեխնիկական գործունեության մեջ ներգրավված գիտաշխատողների տարիքային կազմի անհամաչափ բաշխվածություն՝ առավելագույն կետերի հասնելով 35-39 և 70-75 տարիքային միջակայքերում), գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակի որակական փոփոխության, խախտվում է սերնդափոխության սահուն ընթացքը, որն առաջիկա 5 տարիների ընթացքում կարող է ունենալ լուրջ բացասական ազդեցություն գիտական համակարգի վրա, ինչպես նաև՝ երիտասարդ կադրերի ցածր ներհոսք և ցածր կայունություն աշխատատեղում:

Մյուս կողմից մի շարք համաշխարհային առաջատար ոլորտներում ունենք մասնագիտական ներուժի բացակայություն կամ ծայրահեղ ցածր թվաքանակ:

2010 թվականից չի իրականացվել գիտական աշխատողների աշխատավարձի ֆոնդի վերանայում, ինչի հետևանքով, հաշվի առնելով գնաճը և դրամի արժեզրկումը՝ գիտաշխատողների բազային պետական աշխատավարձը գտնվում է շատ ցածր մակարդակի վրա՝ միջինում կազմելով 100 000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը), ինչը գիտության ոլորտը երիտասարդ կադրերի համար դարձնում է ոչ գրավիչ և միևնույն ժամանակ չի մոտիվացնում գիտաշխատողներին պատրաստել նոր կադրեր:

Ելնելով վերը նշված հանգամանքներից, ինչպես նաև՝ նպատակ ունենալով գիտական և գիտատեխնիկական ոլորտում նպաստել գիտության հասարակական վարկի բարձրացմանը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության ապահովմանը, նրանց սոցիալական խնդիրներին լուծմանը, որոնք որպես գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ և սկզբունքներ ամրագրված են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի գ) և 2-րդ մասի է) կետերով՝ անհրաժեշտ է ըստ գիտական կադրերի տարակարգի նորմավորել վերջիններիս բազային աշխատավարձերը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Գիտական կադրերի աշխատանքային և սոցիալ-տնտեսական ոչ բավարար պայմաններով, աշխատանքային կարիերայի շարունակական զարգացման արդարացի մեխանիզմների բացակայությամբ և հասարակության մեջ գիտության գրավչության ու հեղինակության ոչ բարձր մակարդակով պայմանավորված՝ նախագծով առաջարկվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման գծով պետական ծրագրերում (այսուհետ՝ պետական ծրագրեր) ներգրավված գիտական կադրերի պաշտոնային դրույքաչափի նվազագույն արժեքի հաշվարկի համար որպես բազային աշխատավարձ 2022 թվականի հունվարի 1-ից սահմանել 66 140 դրամ, և յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն արժեքը, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատողների համար, հաշվարկել

նախագծով առաջարկվող Աղյուսակով տվյալ տարվա համար սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով, իսկ 2025 թվականից հետո առաջարկվում է պահպանել համապատասխան Աղյուսակով 2025 թվականի համար սահմանված գործակցիցը:

Բացի վերոնշյալ կարգավորումներից՝ նախատեսվում է ստեղծել համապատասխան իրավական հիմքեր 2021 թվականին գիտական անձնակազմի կամավոր արտահերթ ատեստավորում իրականացնելու համար, որը հնարավորություն կտա արտահերթ ատեստավորումն անցած գիտական կադրերին վարձատրվելու սույն նախագծով առաջարկվող բազային նվազագույն աշխատավարձի համապատասխան դրույքաչափերով:

Նշված Աղյուսակով նախատեսվում է նաև գիտական ղեկավար պաշտոնների, այդ թվում՝ գիտական խմբի ղեկավարի և գիտական ստորաբաժանման ղեկավար պաշտոնների (լաբորատորիայի վարիչ, բաժնի վարիչ, սեկտորի վարիչ, բաժանմունքի ղեկավար/վարիչ, կենտրոնի ղեկավար և այլն) աշխատավարձերի նորմավորում:

Այսպիսով, 2021 թվականին պետական ծրագրերում ներգրավված գիտական կադրերի բազային աշխատավարձի ֆոնդը նախնական հաշվարկով կազմում է 4,072,898.4 հազ. դրամ, իսկ նախագծի ընդունումից հետո 2022-2025 թվականների համար այն կկազմի համապատասխանաբար՝ 7,698,513.6, 9,970,200.0, 12,409,440.0 և 14,419,518.0 հազ. դրամ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Բազային աշխատավարձերի նորմավորումն ըստ գիտական կադրերի տարակարգի՝ կփոխի գիտական ներուժի կադրային կառուցվածքը և կապահովվի գիտության ոլորտում կադրերի բնականոն արտահոսքն ու ներհոսքը, կնպաստի գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծմանը, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավմանը, գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճին և գիտական ներուժի արդյունավետ նպատակային վերարտադրության ապահովմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ

**ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2001թ հոկտեմբերի 3-ին հաստատված «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» թիվ 935 որոշման մեջ:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ
ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1121 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ արդարդատության նախարարություն 26-04-2021 թվականի N //10453-2021 գրություն</p>	<p>1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում առաջարկում ենք հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածին:</p> <p>Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ N 1121 որոշման նախաբանում որպես լիազորող նորմ նշված է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետը, որով սահմանվում է, որ <i>գիտական և գիտատեխնիկական գործունեության բյուջեային ֆինանսավորումն իրականացվում է բազային ֆինանսավորմամբ, որը հատկացվում է գիտական պետական կազմակերպություններում հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման, ազգային արժեք</i></p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>Կատարվել է համապատասխան լրացումը, ինչպես նաև հղում է կատարվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և 2-րդ մասի «է» կետերին:</p> <p>ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններից հետո 6-րդ հոդվածի պահանջն առաջ է քաշում որոշակի իրավական խնդիրներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում, որը սահմանում է ՀՀ կառավարության իրավասությունը գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում, և մի շարք կարևոր ծրագրերի, մասնավորապես, ոլորտի ռազմավարական, կարճաժամկետ և երկարաժամկետ, կառուցվածքային բարեփոխումների, գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու</p>

	<p>ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ու գիտական կադրերի պատրաստման նպատակներով: Այս առումով հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ N 1121 որոշման նախաբանում նշված լիազորող նորմը, չի նախատեսում հիշյալ որոշումն ընդունելու իրավական հիմք:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ N 1121 որոշման նախաբանում առաջարկում ենք հղում կատարել այն իրավական ակտի համապատասխան լիազորող նորմին, որը կնախատեսի հիշյալ որոշումը ընդունելու լիազորություն: Սույն դիտողությունն բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից:</p> <p>2. Նախագծի 1-ին կետում նշված «որոշման կարգում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «որոշմամբ հաստատված կարգում» բառերով:</p> <p>3. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետով լրացվող 2.2 կետով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը, Հայաստանի</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի, հայեցակարգերի հաստատում չի նախատեսում: Սակայն 15.1 հոդվածը վերը նշված ծրագրերի մշակումը վերապահում է Գիտության կոմիտեին: Ելնելով վերը նշված հանգամանքներից, ինչպես նաև՝ նպատակ ունենալով գիտական և գիտատեխնիկական ոլորտում նպաստել գիտության հասարակական վարկի բարձրացմանը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության ապահովմանը, նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, որոնք որպես գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ և սկզբունքներ ամրագրված են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի գ) և 2-րդ մասի է) կետերով՝ մշակվել և շրջանառության մեջ է դրվել համապատասխան որոշման նախագիծը:</p> <p>Միաժամանակ, նախագծի նախաբանում, որպես լիազորող նորմ հղում է տրվել ՀՀ Սահմանադրության 146-րդ հոդվածին:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Նախածում կատարվել է համապատասխան լրացում:</p>
--	---	---	--

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատողների համար, հաշվարկվում է Աղյուսակով տվյալ փարվա համար սահմանված գործակցի և բազայի աշխատավարձի արտադրյալով:»:

Նկատի ունենալով, որ սույն կետով սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված աշխատաժամանակի նորմալ տևողությամբ աշխատողների պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը, գտնում ենք, որ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ կարգով է որոշվելու ոչ լրիվ աշխատաժամանակ կամ աշխատաժամանակի կրճատ տևողությամբ աշխատողների պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը:

4. Նախագծում ներառված աղյուսակը անհրաժեշտ է ամրագրել Նախագծի հավելվածի տեսքով՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները, այն է՝ *Նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով: Հավելվածներն առանց տվյալ նորմատիվ իրավական ակտի իրավաբանական ուժ չունեն: Նորմատիվ իրավական ակտի համապատասխան մասերը հղում են պարունակում այդ հավելվածներին:*

5. Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումը չի պարունակում նշում բնույթի մասին, առաջարկում ենք Նախագծով լրացնել որոշման բնույթի մասին նշումը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:

Ընդունվել է:

Ընդունվել է:

Նախագծում ներառված աղյուսակը ներկայացվել է առանձին հավելվածի տեսքով:

Կատարվել է համապատասխան փոփոխությունը և նախագծով որոշման վերնագրում «1121» թվերից հետո լրացվել է «-Լ» տառը:

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 26-04-2021 թվականի N 01/8-3/6231-2021 գրություն</p>	<p>Նախագծով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ գիտական կազմակերպություններում ներգրավված գիտական կադրերի պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ հաշվարկվող գործակիցների սահմանում, որի արդյունքում 2022-2024թթ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ միջոցների պահանջը կկազմի՝ ըստ տարիների, 3,639.6; 2,257.6 և 2,439.2 մլն դրամ: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գիտական կադրերի աշխատավարձերի բարձրացումը չի կարող ինքնանպատակ լինել, այլ պետք է բխի գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունից (ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման N 1 հավելվածով հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 171.4 ենթակետի համաձայն՝ նախատեսվում է մշակել «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որտեղ կամրագրվեն ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում 2021-2025 թվականներին իրականացվելիք պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, նպատակները, այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մարտավարությունները, առկա մարտավարություններին համապատասխան միջոցառումների և արդյունքների գնահատման առանցքային ցուցանիշները),</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Նախագծով առաջարկվող փոփոխություններն ու լրացումները նպատակ ունեն գիտական և գիտատեխնիկական ոլորտում նպաստել գիտության հասարակական վարկի բարձրացմանը, գիտական և գիտատեխնիկական կադրերի բարեկեցության ապահովմանը, նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, որոնք որպես գիտական և գիտատեխնիկական ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակներ և սկզբունքներ ամրագրված են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի գ) և 2-րդ մասի է) կետերով՝ ուստի գիտական կադրերի աշխատավարձերի բարձրացումը, որը նախատեսում է գիտության ոլորտը երիտասարդ կադրերով համալրելու խնդրի լուծում, գիտական կադրերի սոցիալ-տնտեսական և աշխատանքային պայմանների բարելավում, ինչպես նաև գիտության հասարակական վարկի բարձրացում ինքնանպատակ չէ: Իսկ ինչ վերաբերում է նախագծին անդրադառնալ «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2021-2025 թվականների ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության նախագծի ընդունումից հետո, տեղեկացնում են, որ ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններից հետո 6-րդ հոդվածի պահանջն առաջ է քաշել</p>
---	--	----------------------	--

	<p>նպատակահարմար ենք գտնում Նախագծին անդրադառնալ վերոնշված ռազմավարության հաստատումից հետո: Ընդ որում, ռազմավարությունն էլ պետք է ներկայացվի ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի նիստի N 42 արձանագրային որոշման պահանջներին համապատասխան:</p> <p>Հարկ ենք համարում նշել նաև, որ բարձրացված հարցի կապակցությամբ անհրաժեշտ է առաջնորդվել 2022 թվականի մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակի, 2022-2024թթ. ՄԺԾԾ-ի առաջարկի մասին ՀՀ վարչապետի մոտ 2021թ. հունվարի 29-ին կայացած խորհրդակցության NՎ/06-2021 արձանագրության 2-րդ կետով տրված հանձնարարականով:</p>		<p>որոշակի իրավական խնդիրներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում, որը սահմանում է ՀՀ կառավարության իրավասությունը գիտական և գիտատեխնիկական պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման բնագավառում, և մի շարք կարևոր ծրագրերի, մասնավորապես, ոլորտի ռազմավարական, կարճաժամկետ և երկարաժամկետ, կառուցվածքային բարեփոխումների, գիտատեխնիկական ներուժի կառուցվածքի բարելավման ու օգտագործման արդյունավետության բարձրացման ծրագրերի, հայեցակարգերի հաստատում չի նախատեսում: Սակայն 15.1 հոդվածը վերը նշված ծրագրերի մշակումը վերապահում է Գիտության կոմիտեին:</p> <p>Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և դրանց կարգավորման գործընթացի ծավալուն և ժամանակատար լինելը, նպատակահարմար չէ նմանատիպ կարևոր նախագծի հետաձգումը:</p>
<p>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 23-04-2021 թվականի N ՍՊ/21.1/10127-2021 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն 22-04-2021 թվականի N 01/17.1/2431-2021 գրություն</p>	<p>1. Նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի և 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները:</p>	<p>Ընդունվել են:</p>	<p>Կատարվել են համապատասխան փոփոխությունները:</p>

	<p>2. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջները՝ Նախագծի 1-ին կետի 1-ին ենթակետի դրույթներն անհրաժեշտ է շարադրել երկու առանձին ենթակետերի տեսքով, հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«1)2-րդ կետում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,</p> <p>2) 2-րդ, 9-րդ և 13-րդ կետերում «ֆինանսների» բառից հետո հանել «և էկոնոմիկայի» բառերը,»:</p> <p>3. Նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները՝ Նախագծով հաստատվող Աղյուսակն անհրաժեշտ է ամրագրել առանձին հավելվածի ձևով և Նախագծի 2.2 կետում հղում կատարել այդ հավելվածին:</p>		
<p>ՀՀ առողջապահության նախարարություն 26-04-2021 թվականի N ԱԱ/06.1/8540-2021 գրություն</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չկան:</p>		
<p>Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 26-04-2021 թվականի N ՄԱ/ԺԱ-1-3/18137-2021 գրություն</p>	<p>ՀՀ Սահմանադրության 84-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նվազագույն աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով:</p> <p>«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին և 4-րդ հոդվածների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձ է սահմանվել 68000 դրամը, որտեղ ներառված չեն աշխատավարձից վճարվող հարկերը, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները:</p> <p>Միաժամանակ, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը</p>	<p>Ընդունվել է:</p>	<p>Նախագծի 2-րդ կետով լրացվող 2.3-րդ կետի «լաբորանտ կամ ճարտարագետի» համար 2022 թվականի կտրվածքով առաջարկվող «1.41» գործակիցը վերանայվել է:</p>

	<p>պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով: Միաժամանակ, օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճար չեն վճարում 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով, և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Սույն մասում նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ պետական մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ ՀՀ պետական բյուջեից. 2. տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ համապատասխան համայնքի բյուջեից. 3. այլ գործատուների մոտ աշխատող անձանց փոխարեն՝ տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ նրա միջոցների հաշվին: <p>«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված</p>		
--	---	--	--

	<p>վնասների հատուցման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, օրինակ, մինչև 100000 դրամ հաշվարկման բազայի դեպքում՝ դրոշմանիշային վճարի չափը սահմանված է 1500 դրամ:</p> <p>Տեղեկացնում ենք նաև, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի անցումային կարգավորումներով, մասնավորապես՝ 81-րդ հոդվածի 8.2-րդ կետով 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և նույն հոդվածի 6-րդ մասում նշված՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար՝ սոցիալական վճարը հաշվարկվելու է, օրինակ, մինչև 500000 դրամը ներառյալ ամսական աշխատավարձերի դեպքում՝ 4.5 տոկոսով (2021 թվականի համար նախատեսված է 3.5 տոկոսով):</p> <p>Հարկ է նշել նաև, որ մինչև 1974 թվականը ծնված անձանց համար «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված որոշակի դեպքերում՝ 500000 դրամը ներառյալ ամսական աշխատավարձերի դեպքում սահմանված է 5 տոկոս սոցիալական վճարի դրույքաչափը:</p> <p>Միաժամանակ, 2022 թվականի համար ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է եկամտային հարկը հաշվարկելու համար 21 տոկոս դրույքաչափը:</p>		
<p>ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ 26-04-2021 թվականի N 04/46.3/13640-2021 գրություն</p>	<p>Նախ պետք է նշել, որ տարիֆավորման համակարգերը որպես կանոն ունենում են կայուն արժեքներ և դրանց ներսում փոփոխություններ կատարվում են ժամանակի ընթացքում որոշակի աշխատանքների արժեքների (աշխատաշուկայի պահանջներից թելադրվող) փոփոխության դեպքում, իսկ գնաճով պայմանավորված փոփոխություններն իրականացվում են դրանց</p>	<p>Չի ընդունվել:</p>	<p>Գիտության ոլորտի մերօրյա կարևորագույն հիմնախնդիրներից է գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության հարցը, որը հանգեցնում է գիտության ոլորտից երիտասարդների զգալի արտահոսքին, գիտության արագ «ծերացման», որի նախապայմաններից է գիտական</p>

	<p>որոշման համար հիմք հանդիսացող բազային միավորի միջոցով: Ուստի այս առումով, գտնում ենք, որ Նախագծով առաջարկվող կարգավորումը վերանայման կարիք ունի: Բացի այդ, մինչև 2025 թվականը գնաճի մասով կանխատեսումները խիստ ռիսկային են, միևնույն ժամանակ այդպիսի իրավիճակներում պահանջվում են համապարփակ գնահատականներ տնտեսության բոլոր ոլորտների մասով:</p> <p>Մյուս կողմից էլ, մեր կարծիքով, գիտական կադրերի համար առաջարկվող հիմնական աշխատավարձերը որոշակի համեմատության մեջ պետք է դնել նաև պետական այլ հատվածի գիտական կազմակերպությունների աշխատողների համար սահմանված հիմնական աշխատավարձերի հետ: Օրինակ Կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի N 737-Ն որոշմամբ Պաշտպանության նախարարության գիտական հաստատություններում գիտական աշխատողի պաշտոնից մինչև պրոռեկտորի պաշտոնի համար սահմանված հիմնական աշխատավարձի հաշվարկման գործակիցները տատանվում են 2.47-4.80 սահմաններում, որոնց համար ևս բազային աշխատավարձը 66140 դրամ է: Հետևաբար, այս առումով ևս Նախագծով առաջարկվող գործակիցները խնդրահարույց են:</p>		<p>կադրերի բազային պետական աշխատավարձի շատ ցածր մակարդակը:</p> <p>Սակայն, հաշվի առնելով երկրի ներկայիս իրավիճակը, խնդրի լուծմանը կարելի է հասնել միայն աստիճանաբար բարձրացնելով վերջիններիս բազային պետական աշխատավարձը 2022-2025 թվականների համար սահմանելով համապատասխան գործակիցների վերընթաց աճ:</p>
<p>«Վ գիտությունների ազգային ակադեմիա»</p>	<p>«Վ ԳԱԱ-ն լիովին համաձայն է նախագծով առաջարկվող փոփոխությունների և լրացումների հետ և առաջարկություններ ու դիտողություններ չկան:</p>		
<p>«Վ էկոնոմիկայի նախարարություն»</p>	<p>Սահմանված ժամկետում առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացվել:</p>		